ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 054-Ն

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՀՈԴՎԱԾԱՅԻՆ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Տալ համաձայնություն.

1. Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ գործառնական դասակարգման 01բաժնի 06 խմբի 01 դասի 4239 (ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) հոդվածից պակասեցնել 6 000 000 ՀՀ դրամ և ուղղել.

ա/Ճանապարհային տրանսպորտ գործառնական դասակարգման 04 բաժնի 05 խմբի 01 դասի 4637 (ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին) հոդվածին 5 000 000 ՀՀ դրամ:

բ/ Աղբահանություն և սանիտարական մաքրում գործառնական դասակարգման 05 բաժնի 01 խմբի 01 դասի 4637 (ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին) հոդվածին 1 000 000 ՀՀ դրամ:

2. Ոռոգման ցանցի կառուցում և վերանորոգում գործառնական դասակարգման 04բաժնի 02 խմբի 04 դասի 5112 (շենքերի և շինությունների շինարարություն) հոդվածից պակասեցնել 110 000 ՀՀ դրամ և ուղղել ջրամատակարարում և կոյուղու համակարգ գործառնական դասակարգման 06բաժնի 03 խմբի 01 դասի 5112 (շենքերի և շինությունների շինարարություն) հոդվածին:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ